ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 4 » նոյեմբերի 2024 թվականի N:532 - Ա ք. Գյումրի

ՏԻԳՐԱՆ ԳՈՒԼՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 60-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Տիգրան Գուլյանի 2024 թվականի նոյեմբերի 1-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Տիգրան Գուլյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդից մնացած մասը՝ 12 աշխատանքային օր՝ 2024 թվականի նոյեմբերի 11-ից 26-ը ներառյալ:

2. Տիգրան Գուլյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի գործառույթների իրականացումը վերապահել նույն կազմակերպության տնօրեն Էդվարդ Գրիգորյանին:

Ա.ՄԱՐՏԻԿՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է